Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16385

361
Ц-81

Ռուսերեն
1901

2010

361
Ա-81

570
146-56

ՏԵՂԵԿԱԳԻՐ
և
ՀԱՇԻՎՈՅՑ
1900 — 1901 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅ. ԲԱՐԵԳ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՍԱՊԱՊԱՇ ԵՎ ՎԱՐՉԱՊԱՇ Է ԱՂԵՆԱՅԻ ՀԱՅՈՑ Վ. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՑ.

1901

Հ.Խ.Ս.Հ. ԳԵՏ. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏ. ԳՐԱԴ. ՊԵՏ. ԲԻՆ-Ի ԱՐՎ. ՀԱՅ. ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՕԲՅԵՈՒՆԻ ՖՈՆԴ
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Հ.Ս.Խ.Հ. Հանրային գրադարան
S.S.S.R. Publicnaya Biblioteka
7/XI 1922
Անվան Մասնակի
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Տպարան Թաւրիզի Հայոց Արամեան դպրոցի

361
Կ-81

2002

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

783021-ան
1463-87

Ծանօթութիւն.

Ընդպատականի Հայուհեաց Բարեգործ. Ընկերութիւնը որովհետև առաջին անգամ կազմուած և վաւերացուած հրատարակուեց 1895 թիւ Փետր. 26-ին, այդ պատճառով նրա իւրաքանչիւր տարեշրջանը սկսւում էր Մարտ 1-ից և փակւում Փետր. վերջինՍակայն Ընկերութեան վեցամեայ գործունէութեան փորձառութիւնը ցոյց տուց, որ տարեշրջանի այս տեսակ սկզբնաւորութիւնը և փակումը շատ անյարմարութիւններ ունի։ — Որովհետև Ընկերութիւնը ունի ուսումնական հաստատութիւններ (դպրոցներ մանկապարտէզ և այլն) այդ իսկ պատճառով էլ նրա գործունէութիւնը իրականապէս սկսւում և փակւում էր ուսումնական տարեշրջանով, որով և առաջ էին գալիս այն անյարմարութիւնները, որ մի ուս. տարեշրջանի մէջ եղած մուտքն ու եկամուտները և ելքն ու ծախքերը մասամբ անցնում էին յաջորդ տարեշրջանի հաշուին, տրւում էր ուսումնական տեղեկագիր նախքան ուս. տարւայ վերջանալը և Վարչութեան ընտրութիւն կամ փոփոխութիւն էր կատարւում գրեթէ տարւայ միջին։

Այս անպատեհութիւնները նկատի ունենալով, Վարչութիւնս խորհեց Ընկերութեան տարեշրջանը փոխել ուս. տարեշրջանի և այդ առթիւ ներկայ թիւ Մարտ 1-ին Ընդհանուր Ժողով հրաւիրելով՝ առաջարկեց ժողովի տնօրինութեան։ Ընդհանուր Ժողովը շատ բանաւոր գտնելով այս առաջարկութիւնը ընդունեց միաձայնութեամբ և որոշեց որ ներկայ շրջանը փոխանակ Փետրւարի վերջին փակելու, փոխւի Մայիսի վերջին՝ և այս տարւայ վրայ աւելացած երեք ամիսների համար տրւի 5-ական զրան եռամսեայ անդամավճար։

Այսպէս էլ եղաւ։ Ուստի սոյն տեղեկագիրը պարունակում է իւր մէջ Ընկերութեան 15-ամեայ գործունէութեան տեղեկագիրը և հաշուեցոյցը։

ՏԵՂԵԿԱԳԻՐ և ՀԱՇԻՎՅՈՒՅՑ

1900 Մարտ 1-ից մինչև 1901 Մայիս 31 տարեշրջանի.

I

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Ներկայ տարեշրջանի հէնց սկզբից Վարչութիւնս նկատի ունենալով գաւառների մէջ սիրող խորին տգիտութիւնը և ուսման ու հայագիտութեան մեծ ու անհրաժեշտ կարիքը, մտածեց ընդարձակել իւր գործունէութեան սահմանը և որքան կարելի է զարկ տալ մեր գաւառական եղբայրների և քոյրերի կրթութեան գործին։ Սակայն որովհետև Ընկերութեան տնտեսական վիճակի սղութիւնը և իւր առաջ դրուած նպատակի դժուարութիւնն ու կարիքի մեծութիւնը կազմում էին մի ծայրահեղ հակադրութիւն, Վարչութիւնս հազիւ կարող եղաւ իւր միջոցների և ստացած նպաստների համեմատ մի քայլ ևս անել դէպի նպատակը։

Այդ քայլը Ուրմիի (քաղաքի մէջ) դպրոցն է։ Այս քաղաքում թէև մի քանի անգամ փորձեր էին եղել դպրոց պահելու, բայց ժողովրդի տգիտութեան և աղքատութեան նաև այլազաւան տարրերի մրցութեան պատճառով միշտ անյաջողութեան էին մատնուել (*)։ Այսօր Վարչութիւնս այդ դպրոցի բացումով չա-

(*) Այդ անյաջողութիւններից յետոյ մասնաւոր դիմումներ եղան Վարչութեանս որ այդ դպրոցը ընկերութիւնը իւր հովանաւորութեան տակ առնի և ծախքը հոգայ։ Վարչութիւնս էլ բաւական ծանօթութիւն ունենալով Ուրմիի հայ ժողովրդեան դրութեան մասին այդ միտքը նպատակայարմար գտաւ և այս տարի օգտուելով այն հանգամանքից որ Պ. Մելքոն Շահրազեանը (ընկ-եան նախկին քարտուղարը) Ուրմի պիտի գնար, յանձնեց նրան մանրամասն տեղեկութիւններ հաղորդել Վարչութեանս։ Շնորհակալ ենք յիշեալ Պ-ից, որ մեր յանձնարարութիւնը լրիւ կատարեց իր կողմից ևս անհրաժեշտ գտնելով դպրոցի բացումը։

փաղանց ուրախ է, համոզուած լինելով որ ամենակարևոր մի վայրում հիմք է դրել ժողովրդական կրթութեան, որ Հայ ժողովուրդը օրըստօրէ ձուլւում էր օտարազաւանների մէջ։

Այն ձեռնարկութեան յաջողութեան համար Վարչութիւնս մասնաւորապէս պարտական է պ. Ա. Մելիք Աշարեանին, որ 'ի պատասխան մեր դիմումին հաճեց տարեկան 300 ռուբլի նպաստ նշանակել Ուրմիի դպրոցին։ Ու այդ հրապարակաւ յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը յիշեալ Պարոնին, որը մի շատ գնահատելի գործի մեկենասը հանդիսացաւ։

Ընկերութեան նախորդ տարւայ տեղեկագրից յայտնի է, որ Սուլդուզի Դաղաղէյ գիւղում մի դպրոց էինք բաց արել բայց մի քանի հանգամանքներ (աշակերտների նւազ թիւ, յարմար շէնքի չգոյութիւն, ժողովրդի անտարբերութիւն և այլն) ստիպեցին Վարչութեանս այդ դպրոցը տեղափոխել Հարևան Սովուչ-Բուլաղ գաւառի Դէրէլէք գիւղը, ուր աւելի աշակերտներ և այլ յարմարութիւններ կան։ Այս դպրոցի ծախքը մշտապէս յանձն է առել և հոգում է Պ. Ստեփան Տէր-Օհանեանը։

Ուրմիի Վերդաբաղ գիւղի դպրոցը նախորդ տարիների պէս այս տարի ևս շարունակեց իւր գոյութիւնը Ընկ-եանս ծախքով։

Դկատի ունենալով այն հանգամանքը որ Թաւրիզի օրիորդների կրթութիւնը բաւականացուցիչ չէ, Վարչութիւնս նպատակայարմար նկատեց, որ ընկերութեան կար ու ձևի Արհեստանոցը հնարաւորութեան սահմանում դէթ մասամբ լրացուցիչ դեր կատարէ օրիորդաց կրթութեան վերաբերութեամբ. և այդ նպատակով Արհեստանոցում մի քանի կարևոր առարկաներից դասեր մացրեց։ Այս հանդամանքը այս տարի իբրև փորձ գործադրւեց, որի օգտակարութիւնը ակնյայտնի լինելով՝ պիտի շարունակւի և յաջորդ տարիներում, հաւանօրէն աւելի կանոնաւոր կերպով, եթէ հանդամանքները հարկ եղած դիւրութիւնները

կընձեռեն Վարչութեանս. Ի դէպ շնորհակալութիւն ենք յայտնում այն ուսուցիչներին, որոնք այս տարի յանձն առան ձրիաբար դասախօսելու Արհեստանոցում։

Վարչութիւնս նկատելով որ ուսանող աշակերտները ինչինչ պատճառներով (դպրոցից անկախ) երբեմն կիսատ թողնելով դպրոցական դասընթացը մտնում են Արհեստանոց, որով փնտրում են թէ իրանց և թէ ընդհանրապէս օրիորդների կրթութեան գործին և միւս կողմից կամենալով, որ Արհեստանոցի դասերի դրութիւնը աւելի կանոնաւորւի-որոշեց այլ ևս Արհեստանոց չընդունել այն օրիորդներին, որոնք Ս. Աննայեան դպրոցից աւարտման վկայական չեն ունենայ։

Ընկերութեանս անւամբ, նախորդ տարւայ պէս պահւել է 5 որդեգիր Արամեան և Ս. Աննայեան դպրոցներում չքաւոր երեխաներից, վճարելով նրանց տարեթոշակը և հագուստի ծախքը։

Վարչութիւնս բաժանորդ գրւելով ստացել է 1 օր „Բանասէր“ Արամեան և Ս. Աննայեան դպրոցների Մանկական Գրադարանի համար և մի օր. „Մշակ“, որը Արհեստանոցում կարդացւելուց յետոյ ուղարկւում է Դէրէլէքի ուսուցիչարանին։

Զանազան անհատներից ընկերութեան նւէր են ուղարկւել զանազան հրատարակութիւններ, որոնց վարչութիւնս ցրւել է թէ իւր և թէ այլ ազգային կրթական հաստատութիւնների մէջ։ Այդ նւիրւած գրքերից ուղարկելով այն տեղերը, ուր որ Ընկերութիւնս ուսուցիչարաններ ունի, նպատակ ենք ունեցել այսպիսով գիւղական ժողովրդական Գրադարանիկիները դրած լինել, ապագայում աւելի զարգացնելու և ճոխացնելու յոյսով։ Ու այս խորին շնորհակալութիւն ենք յայտնում նւիրատու պարոններին և տիկիններին։

Ընկերութեանս կողմից այս տարի նիւթական նպաստներ

է տուել 7 ակռայի և զաղթական չքաւոր ընտանիքների և անձանց 370 դրամ։

Վարչութիւնս նախորդ տարիների սովորութեան համաձայն այս տարի ևս կազմակերպել է յօդուտ Ընկերութեան տօնածառ, մանկական ներկայացում և վիճակախաղ (Երիտասարդների ձեռագործներից) նոր տարւայ երեկոյին և ապա մի թատրոնական ներկայացում։ Շնորհակալութիւն այն անձանց և հասարակութիւններին, որոնք աջակցել են Վարչութեանս վերոյիշեալ գործերում։

Ընկերութիւնը այս տարեշրջանում ունեցել է 91 անդամուհիներ, որոնցից 3-ը մշանջենական, 3-ը պատուաւոր և մնացած 85-ը հիմնական և տարեկան անդամներ են։ (*)

Եթէ ընթերցողը ծանօթ է Ընկերութեանս նախորդ տարիների գործունէութեան, պարզ կերպով կը նկատի որ ընկերութիւնը զարգացման և առաջադիմութեան մէջ է, սի տարեցտարի նրա գործունէութեան սահմանը լայնացել է և որ հէնց ներկայ տարեշրջանի գործունէութիւնը և միջոցները նախորդից աւելի բաւարար են։ Այս հանգամանքը անշուշտ մխիթարական է, սակայն Վարչութիւնս երբէք ինքնաբաւական և գոհ չէ եղածից, որովհետև դիտենալով կարիքի մեծութիւնը զգում է որ այս բոլորը միայն մի կաթիլ անձրև է երաշտութիւնից տապակուած երկրի համար, լոյսի մի աղօտ ճառագայթ խորին մթութեան մէջ։ Արտասահմանի մեծ նահանգի բազմաթիւ գաւառների մէջ ցրուած տասնեակ հազարաւոր հայերը, զուրկ մտաւոր ու բարոյական կրթութիւնից, մատնուած աղքատութեան ճիրաններին, անձ-

(*) Պատուոյ անդամներ կարող են լինել նրանք, որոնք Ընկերութեան մի մեծ ծառայութիւն կը մատուցանեն, Մշանջենական - որոնք առնուազը 50 թուման (100 բուրլի) միանուագ կը վճարեն, Հիմնական - որոնք տարեկան առնուազը 5 թուման (10 բուրլի) կը վճարեն և Տարեկան - որոնք իւրաքանչիւր տարի 2 թուման (4 բուրլի) միայն կը վճարեն։

նատուր պանդխտութեան աւերիչ սովորութեան, հարստահարուած զանազան գործնէ և յեռէ վաշխառուներից՝ շատ աւելի բարոյական ու նիւթական օգնութեան կարօտ են քան որ կարող և ձեռնհաս է անել նրանց Ընկերութիւնս։ Դեռ որքան գաւառներ կան որ մի շատ հասարակ զիւղական ուսումնարան անդամ չունին, որքան զիւղեր կան որ մի հասարակ տիրացուի անդամ կարօտ են, քանի քանի ընտանիքներ՝ որ կորստեան անդունդի եզերքին հասած՝ կարօտ են փրկարար և սատարող ձեռների։ Ահա այս բոլորը նկատի ունենալով պարզ է որ Ընկերութեան միջոցները և արտածները շատ չնչին են կարիքի համեմատութեամբ։ Որքան որ մեծ ու բազմատեսակ են կարիքները, այնքան էլ կարող և բազմաթիւ պիտի լինեն նրանց հոգացող ձեռները։ Այդ իսկ պատճառով վերոյիշեալ գժբաղդ հանգամանքները Ընկերութեան Յարգելի Անդամների և առ հասարակ Բարեգործ անձանց և Հայ հասարակութեան ուշադրութեան յանձնելով՝ խնդրում ենք նրանց բարոյական և նիւթական օժանդակութիւնը յանուն մեր խեղճ ու թշուառ հարազատների։

Ընկերութեանս նեւիրատու անձանց անունները շնորհակալութեամբ հանդերձ յիշատակելով սոյն տեղեկագրի մէջ յուսով ենք որ շատերը պիտի աշխատեն հետևել նրանց բարի օրինակին։

II

Սպաց-ած Դ-էրնէրը.

Վարչութիւնս պարտք է համարում իւր սրտագին շնորհակալութիւնները յայտնելու հետևեալ յարգելի անձնաւորութեանց, որոնք նիւթական օժանդակութեամբ խրախուսել և զօրավիգ են հանդիսացել Ընկերութեան։

Մեծ. Պ. Ա. Մելիք Ազարեանը նուիրել է Ուրմիի ուսումնարանին նպաստ . . . 1625 դրամ.

Մեծ. Պ. Ս. Տէր-Օհանեանը նուիրել է Դերեւեքի ուսումնարանին նպաստ . . . 1200 դրամ.
„ „ Ն. Աղամեանի միջոցով Սարդուարում հանգանակուած . . . . . 440 դրամ.
Համեա. Տիր. Շ. Տէր-Մարգարեանը նուիրել է 550 „
„ „ Մհսի. Հ. Դրինճիլյանը „ 100 „
„ „ Բարխուդարեանը „ 54 „
„ „ Թ. Նազարբեգեանը „ 40 „

Շնորհակալութեամբ ստացել ենք և հեռաւոր նուէրները:

Եղբարք թուումանեաններից 400 կարմիր զանազան գրքեր:

Բաղիշցի քանի տիկինների ու պարոնների կողմից նուիրուած 100 օրինակ Պ. Հ. Ռաքելեանի Թարգ. „Ուրանիա“ վէպից:

Տիկին Փեփրոնէ Յովհաննէսեանից մէկ գիւժին աթոռ:

Վարչութիւնս երախտագիտութեամբ շնորհակալութիւն է յայտնում նա և այն անձանց և հաստատութիւններին, որոնք նպաստել և խրախուսել են Վարչութեանս բարոյական աջակցութեամբ:

III

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) Ո-րմն դպրոց.— Այս դպրոցը բացուել է ներկայ ուսումնական տարուայ մէջ և ունեցել է 30 աշակերտներ և 4 օրիորդներ ա. է. գ. և դ. բաժանմունքով: Աշակերտները բոլորը ձրիավարժ են և դասական պիտոյքները մեծ մասամբ ստացել են Ընկերութիւնից ձրիաբար: (1) Դպրոցը ունի նոր և յարմար շէնք և դպրոցական անհրաժեշտ կարասիներ: Ուսուցիչը եղել է Պ.

(1) Սրանցից շատերը օտարազգիների ուսումնարաններից տեղափոխուածներ են որոնք աւելի դնահատել են ազգային հարազատ դպրոցում կրթուել քան օտարների:

Տիգրան Օտեան: Դպրոցի ուսումնական վիճակը գտնուել է Պ. Մելքոն Շահբազեանի հսկողութեան տակ:

Ընկերութիւնը նպատակ ունի միջոց ունենալու դէպքում այս դպրոցը երկսեռ դարձնել և շրջակայ հայ գիւղերից երթևեկ և դիշերօթիկ աշակերտներ ընդունելով կենդրոնականի կերպարանք տալ, որով շատ ու շատ օգտակար կը լինի ամբողջ գաւառի համար:

Մասնաւորապէս Պ. Մ. Շահբազեանի և ուսուցիչ Պ. Տ. Օտեանի ձեռնարկութեամբ տուել է մի մանկական երեկոյթ, որի 30 թուման զուտ արդիւնքով մի մեայուն Ռեմ է շինել, որպէս զի իւրաքանչիւր տարի դպրոցի օգտին ներկայացուցիչներ տալու դիւրութիւն լինի: (2)

2) Դէրդաբէրդի դպրոցը Ո-րմն գ-ա-ռ-ո-մ. — Այս դրպրոցը երեք տարի է որ գոյութիւն ունի և պահւում է մասնաւորապէս Ընկերութեանս հաշուով: Աշակերտները ձրիավարժ են և դասական բոլոր պիտոյքները ձրիապէս ստացել են Ընկերութիւնից: Դոցա թիւը փոփոխական է եղել (20-35) նայելով տարուայ եղանակներին: Դիւղը զուտ հայաբնակ է և բազմամարդ (130 տուն). սակայն պանդխտութեան գնալու սովորութիւնը արգելք է դառնում հասարակական գործերի յառաջադիմութեան: Վարչութեանս յաճախակի դիմումներից յետոյ այս տարի միայն յաջողեցան հոդաբարձութիւն ընտրել և խոստացան դպրոցի համար նոր շէնք կառուցանել, որովհետև հինը արդէն բոլորովին անպէտք է դարձել: Այս դպրոցի համար տարուայ սկզբին ուսուցիչ

(2) Ուսումնական տարուայ վերջին դպրոցը փակուել է աշակերտական հանդէսով, որին հրաւիրուած են եղել և ծնողները: Հանդէսում ատենախօսել են Պ. Մ. Շահբազեանը, Պ. Օտեանը և Արժ. Հայր Տէր-Գէորգ Օտեանը, հանդէսի փակումից յետոյ հասարակութիւնը բուռն շնորհակալութիւն է յայտնել Ընկերութեանս ներկայացուցչին:

էր վարձած պ. Տ. Օտեանը, բայց յետոյ քաղաքի համար յարմար ուսուցիչ չը գտնելով յիշեալ պարոնին տեղափոխեցինք քաղաք և գիւղի դպրոցը յանձնեցինք Նորընձայ քահանայ տէր-Մկրտիչ տէր-Պետրոսեանին: Այս դպրոցը նոյնպէս դատուել է պ. Մ. Շահբազեանի հսկողութեան տակ:

3) Դէրէ-էէ դպրոցը Սոլ-ղ-Խ-լաղ գ-ատ-ռ-մ.—Գիւղը մեծ է և քրդաբնակ, ունի 46 տուն հայ բնակիչ, բոլորը քրիստոնեայ: Փափագում են դպրոցի և կրթութեան. ուել են 25-30 աշակերտներ երկու սեռից, բոլորը ձրիավարժ, որոնք դասական պիտոյքները նոյնպէս ձրի են ստացել ընկերութիւնից: Առաջին տարին է որ այս գիւղը դպրոց է տեսնում, այդ պատճառով էլ դպրոցի համար յատուկ շէնք չը կար և դասատանդութիւնը կատարւում էր մատնաւոր տան մէջ: Վարչութեանս առաջարկութեան համեմատ դպրոցի համար յատուկ շէնք կառուցանելու պատրաստութիւններ են տեսնւում ժողովրդի կողմից և յուսալի է որ դալ ուսումնական տարւայ համար նոր շէնքը պատրաստ լինի: Այս մասին Վարչութեանս խնդրանքը Աղա Օշաքարեա Նազարիկեանի կողմից զիմում է եղել Դէրէէի գիւղատէր Իբրահիմ Աղա Սէրհնդին, որ ուսումնարանի համար պէտք եղած դեռինը նուիրէ հասարակութեան (հողը գիւղատիրոջ սեփականութիւն է): Ուսուցիչը եղել է պ. Աբրահամ Տ. Յարութիւնեանը:

Ծանօթ.—Վերոյիշեալ երեք դպրոցների համար էլ ուսանելի առարկաների մանրամասն ծրագիր է տուել ուսուցիչներին վարչութեանս կողմից: Աւանդւել է Հայոց լեզու, Կրօն, Թուաբանութիւն, Հայրենագիտութիւն, ազգային և եկեղեցական երգեցողութիւն, գրութիւն, մարմնամարզութիւն և այլն:

4) Կարս-Յեր արհեստանոցը Թ-ւ-ղ-ղ-մ.—Արհեստանոցը սրանով բոլորից իւր վեցամեայ շրջանը: Կար ու ձևի դասերը աւանդւել է նախկին կանոնաւորութեամբ մի և նոյն վարժուհու

ձեռքով (օր. Մարիամ Պետրոսեան): Սովորել են 20 օրիորդներ, 12-ը թոշակաւոր 7-ը ձրի և 1-ը կիսաթոշակ: Այս տարի աւարտման վկայական են ստացել հետևեալ 8 օրիորդները. օրիորդ Վիկտորիա Շահբազեան, օր. Լեմիսո Միրզայեան, օր. Վարինկա Գրիգորեան, օր. Կատարինէ Նիկոդայոսեան, օր. Հեղինէ Խաչատրեան, և օր. Եղէն Շահնազարեան: Խոկ անցեալ տարւայ աւարտածները, որոնց անունները նշանակւած չէ նախորդ տարւայ տեղեկագրի մէջ, հետևեալներն են. օր. Քրիստին Փաբրի, օրիորդ Վարդանոյշ Գորդեան, օր. Լսթեր Յովհաննեան, օր. Հեղինէ Գրիգորեան և օր. Մարիամ Սեթ-խանեան:

Խոցի կարուձևի դասերից այս տարի արհեստանոցում եղել են դասեր նաև հետևեալ առարկաներից. Հայոց լեզու շաբաթական մի դաս, Թուաբանութիւն՝ 2 դաս, բնական գիտութիւններից մատչելի դասախօսութիւններ՝ մի դաս և ընթերցանութիւն՝ մի դաս: Հայոց լեզուի և բնական գիտութիւնների դասերը աւանդել և ընթերցանութեան դասերը ղեկավարել է պ. Ն. Տեր-Յովհաննիսեանը իսկ թուաբանութեան դասերը պարապել է պ. Գ. Աղաջանեանը: Խոցի այս, օրիորդներից աւելի կարողները ուսուցչի առաջնորդութեամբ զանազան օգտակար նիւթերի մասին կազմել են դասախօսութիւններ և կարդացել ընկերուհիներին, որով ախթ է տուել նրանց ինքնակրթութեան վարժուելու:

5) Մանկական պարտէզը Թ-ւ-ղ-ղ-մ.—Այս մանկապարտէզը նոյնպէս վեցերորդ տարին է որ գոյութիւն ունի, կառավարել է նախկին վարժուհին: Մանուկների թիւը երկու սեռից միասին եղել է 48, որոնից 12-ը ձրիավարժ, 2-կիսաթոշակ և մնացածը թոշակաւոր են: Պարապմունքները մանկապարտիզում անցնում են զուարճալի և հետաքրքիր մանուկների համար. բոլորը մեծ հաճութեամբ են յաճախում և ցոյց են տալիս օրինակելի կարգապահութիւն և յառաջադիմութիւն:

Ծանոթ. — Որպէս զի Երզնկայի և Մանկապարտէզի վարժուհու համար չափազանց ծանր չը լինի այդ երկու հաստատութիւնների կառավարելը, Վարչութեան խնդրանքը և անօրինութեամբ պարապմունքներին օգնել են՝ Մանկապարտիզում օր. Վարինկա Գրիգորեանը իսկ Երզնկայում անցեալ տարւայ

Հաշուեցոյց Արպատականի Հայուհեաց Բարեգործական

ՄՈՒՏՔ.

	զուտն	կ.	զուտն	կ.
1899 — 1900-ի դրամագլուխը . .			22844	5
Մանկապարտիզից և Երզնկայից ստացած թոշակներ	2165	—		
Երզնկայից արդիւնք . . .	1608	45		
Կարելավարձ	421	50		
Անգամավճարներ	1935	—		
Գործարանից ծախսած նիւթերից . .	621	10		
Ստացած նուէրներ	4027	10		
Տօնածառից և ներկայացումից զուտ արդիւնք	2020	50		
Ստացած տոկոսներ	3007	15	15805	80
			38649	85

աւարտող օրիորդներից՝ օր. Վարդանոյշ Գրոյեանը, օր. Մարիամ Սեթ-խանեանը, օր. Եսթեր Յովհաննեանը և օր. Հեղինէ Գրիգորեանը հերթով։ Շնորհակալենք այդ օրիորդներից, որ մասամբ թեթևացրել են վարժուհու ծանր աշխատութիւնները։

Ընկերութեան 1900 Մարտ 1 — ից մինչև 1901 Մայիս 31.

ԵԼՔ.

	զուտն	կ.	զուտն	կ.
Տան վարձ (Երզնկայի և Մանկապարտիզի)	1050	—		
Ծախքեր — փոստի, ջրի, տպագրութեան, ճանապարհի, դպրոցական կարասիների և այլն	1379	10		
Արամեան և Ս. Աննայեան դպրոցներում 5 որդեգիր սաների թոշ. 300 ղ. և հգստ-ը 150 ղ.	450	—		
Տրուած նպաստ. չքաւոր անձանց և ընտ-ների	370	—		
Դասական պիտոյքների համար ծախսուած	217	5		
Ռոճիկներ	10026	55		
Բաժանորդագին „Մշակ“ի և „Բանասէր“ի	99	—		
Փոխանակագրի սարքի և մանր կորուստներ	120	55	13712	25
1901 — 1902-դրամագլուխ . .			24937	60
			38649	85

Ընկերութեան հասցէն՝

„Վարչութիւն Արպատականի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան“.

Թաւրիզ—Պարսկաստան.

Азербайджанское Женское БЛАГОТВОРИТЕЛЬНОЕ *Общество.*

Въ Тавризъ. (Персія)

Վարչութիւն

Նախագահ՝	Տիկ.	Հեղինէ Յօրժ.
Փոխ-Նախագահ՝	„	Մարիամ Նազարբէկեանց.
Գանձապահ՝	„	Փեփրոնէ Մելիք-Սարգսեանց.
Խորհրդական՝	„	Փեփրոնէ Յովհաննէսեանց.
	„	Եղանուշի Գորոյեանց.
	„	Էլմասա Շահբազեանց.
	„	Մանիա Գրիգորեանց.

Արպատականի Հայուհեաց
ԴԱՎՐԷԺ
1895 ամի:
Բարեգ. ընկերութիւն:

1901. Յունիս 1
Թաւրիզ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Publicnaya Biblioteka
7/XI 1922
ԵՐԵՎԱՆ, Мясники на
Ա. ՍՅԱՍԱՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2013